ւորում է և շատ կարելի է, որ հանգուցեալ Էմիլ դը-Ժիրարդէնի ընտրողները այժմ նրա համար ձայն կը տան աւելի յարմարաւոր կանդիդատ չունենալու պատճառով։ Այդպիսի գործը անբաւականութիւն կը պատճառէ կառավարութեանը և հասարակական կարծիքին և այդ պատճառով հասկանալի է, որ հանրապետական մամուլը խիստ կրիտիկայի է ենթարկում Հերվէի ցանկութիւնները և ձգտումները։ Հերվէ իր «Soleil» լրագրի մէջ յայտնում է այն միտքը, թէ կոմս Շամբորի օրինաւոր իրաւունքները ժողովրդական վկայութեան պէտք չունեն, թէ նրանք բարձր են ժողովրդական պատահական ցանկութիւններից և որոշվում են ոչ թէ փոփոխական տէօրիաներով, այլ ժառանգութեան անփոփոխ օրէնքի ուժով։ Հանրապետականները համաձայնում են այդ տեսակէտի հետ և խորհուրդ են տալիս օրինականներին յաջորդաբար վարվել, այսինքն չը ցանկանալ ժողովրդական քուէներ իրանց կանդիդատների համար, հանգիստ թողնել ժողովրդական ամեն տեսակ ցանկութիւնները և բաւականանալ իրանց օրինաւոր իրաւունքներով, որոնք Աստուածային ամենազօր տէօրետիկական նշանակութիւն ունեն։ Կոմս Շամբոր իսկապէս պէտք է չը ցանկանայ, որ պատգամաւորների ժողովի մէջ շատ կուսակիցներ ունենայ. եթէ Ֆրանսիայի օրինաւոր թագաւոր նա պէտք է չը սպասէ, որ Ֆրանսիան նրան հրաւիրէ և կամ Ֆրանսիական ժողովուրդը հաստատէ նրա իրաւունքները։ Իւրաքանչիւր րոպէ նա կարող է վճռել, որ հասել է իր ժամանակը և որ ժամանակ է մտնել փարիզ իր նախորդների երկրում օրինաւոր կարգեր մտցնելու համար։ Այսպէս են խօսում միապետական ըսկզբունքների քարոզողները և դրանով աւելի էլ թեթևացնում են իրանց հակառակորդների դրութիւնը։ Հանրապետականների համար աւելի հեշտ է ընդդիմադրել կոմս Շամբորին, քան թէ փարիզի կոմսին, որի կուսակիցները սահմանադրական միապետութիւն էին ցանկանում։ Քանի որ Բուրբոնների տան այդ երկու ճիւղերը ընտանեկան համաձայնութիւն կայացրին, սահմանադրական միապետականները միացան հանրապետականների հետ։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 11 մայիսի

Այստեղ նորութիւնները միշտ նոյն են մնում. իշխան Բիսմարկ իր պառաւ տեղովը ամեն օր նոր բան է հնարում. Այժմ նրան զբաղեցնում է այն միտքը թէ ինչպէս անի որ տեղափոխի Րայխստագը Բերլինից մի այլ քաղաք։ Ի՞նչ է այս նոր հնարած մտքի նպատակը,— ոչ ոք հասկանալ չէ կարող։ Բայց անկասկած հետևանքը այն կը լինի, որ մինիստրները անդադար երկաթուղիների վրա պիտի ընկած լինեն, եթէ ուզենան թէ Րայխստագի մէջ երևալ, թէ կայսրին ներկայանալ.

Լրագիրներում արդէն զանազան քաղաքների անուններ են տալիս, ուր գուցէ պիտի գումարվի Րայխստագը։ Ի հարկէ Բիսմարկի կուսակիցները այդ նոր միտքն էլ շատ խելացի են համարում, թէև իրանք չը գիտեն ինչու. կամ գուցէ համակրում են այն հետևանքին, որին անշուշտ կը հասցնի այդ միջոցը, այն է պարլամենտարիզմի ուժը և յարգանքը կոտրելու։ Արդէն վաղուց է, որ պահպանողականները աղաղակում են թէ պարլամենտարիզմը, ազգային ներկայացուցչութիւնը՝ յիմար բաներ են, թէ երկիրը շատ աւելի երջանիկ կը լինէր, շատ աւելի մեծ բարօրութեան կը հասնէր առանց սահմանադրութեան, առանց պարլամենտական սիստեմայի, և այլ սրա նման խելօք բաներ....

Ինչ և իցէ զարմանալի ժամանակ է և այստեղ, կարծեմ, շարունակում են արագ քայլերով ընթանալ յետադիմութեան ճանապարհի վրա։

Ֆրանսիական լրագրութիւնը շատ մեծ ուշադրութեամբ հետևում է Գերմանիայի գործերին։ Բայց և այստեղ սաստիկ հետաքրքրվում են Ֆրանսիայի գործերով։ Այստեղի մամուլը լի է տեղեկութիւններով Տունիսի արշաւանքի վերաբերութեամբ և համակրում է, ըստ երևոյթին, Ֆրանսիայի այս ձեռնարկած պատերազմին։ Ի՞նչի են համակրում,— այդ, ի հարկէ, զանազան պատճառներ ունի։ Միամիտները, որոնք այնքան իդէալական հայեացքներ ունեն, որ մտածում են մարդկութեան ընդհանուր շահերի վրա, այն պատճառով են ուրախանում, ի հարկէ, որ Ֆրանսիան իր պատերազմով և գուցէ Տունիսը միացնելով իր պետութեան իշխանութեանը, քաղաքակրթիչ դեր է կատարում։ Ուրիշները ուրախ են միայն այն պատճառով, որ Ֆրանսիան, որ նրանց աչքում Գերմանիայի ամենավտանգաւոր թշնամին է, իր ուժերը գործ է դնում մի հեռաւոր պատերազմի վրա, որտեղ սպառում է իր այն ուժերի մի մաս, որոնք կարող էին վտանգաւոր լինել հարևան երկիրներին։ Ասում են, մինչև անգամ, իբր թէ իշխան Բիսմարկ նորերումս մի Ֆրանսիացի գեներալին իր համակրութիւն է յայտնել Ֆրանսիայի վերջին քաղաքականութեան մասին Տունիսի վերաբերութեամբ և աւելացրել է՝ «Ֆրանսիան, ըստ երևոյթին, պահանջ ունի տաս տարին գոնէ մի անգամ պատերազմ վարել և ուրախալի է որ նա այս անգամ ընտրել է մի հեռաւոր երկիր, փոխանակ իր ուժերը գործ դնելու հարևաններին անհանգստացնելու համար։»

Կանցլէրի քաղաքականութեանն են վերաբերում, որ այս տարի գաղթականութիւնը Գերմանիայից դէպի հիւսիսային և հարաւային Ամերիկա այնքան մեծ թիւն է հասնում, ինչպիսին դեռ երբէք հասած չէր։ Նոր հարկեր նեղացնում են ժողովուրդը, որ առանց դրան էլ շատ և շատ աղքատ է, արդիւնագործութիւնը բոլորովին ընկած դրութեան մէջ է, աշխատանք և ուրեմն վաստակ չը կայ, իսկ հարկերը, թէ գիւղացու և թէ քաղաքացու վրա, անդադար աւելանում են. հովանաւորող մաքսը (Schutzzoll) քանդում է գործարանները և աշխատաւորների դասը, որոնք այժմ զգում են թէ ամեն բան թանգացել է և մի և նոյն ժամանակ աշխատանքը ոչինչ չէ տալիս։ Ընդհանուր յօգնածութիւն է տիրում։ Զարմանալի չէ, ուրեմն, որ գաղթականութիւնը զարհուրելի ընդարձակութիւն է ստանում։ Ամեն կողմից երևում են ագէնտներ, որոնք շահաւէտ պայմաններով առաջարկում են բանւոր դասի մարդկանց տանել նրանց Ամերիկա։ Այսպէս նորերումս երևեցան գործակատարներ, որոնք հրաւիրում են գաղթել դէպի Արգենտինիա (Լա Պլատա) հանրապետութիւնը։

Հակահրէական շարժումը, ինչպէս երևում է, սկսում է հանդարտվել, եթէ միայն նորից ու նոր ուժով չը վառվի։ Անկասկած այստեղ պատրաստ են պախարակել այն բարբարոսութիւնները, որոնք այս րոպէիս կատարվում են Ռուսաստանում հրէաների դէմ. բայց հարցնող լինի ինչո՞վ է զանազանվում այստեղի հակահրէական շարժումը Ռուսաստանի շարժումից։ Ռուսաստանում գոնէ ուղղակի սպանում են, ոչնչացնում են, թալանում են. ժողովուրդը, ամբոխը պարզ ցոյց է տալիս ինչ որ է, իսկ այստեղ լուսաւորված դասակարգին, ինտելիգէնցիային պատկանող մարդիկ, քաղաքակրթութեան դրօշակը բարձրացած՝ պահանջում են զրկել ամեն իրաւունքներից իրանց համաքաղաքացիներին։

Դա չէ՞ նշանակում արդեօք կեանքից զրկել.... միայն թէ, ինչպէս առածն ասում է, խեղդելու համար այստեղ glacé ձեռնոցներն են հագնում....

Այստեղի համալսարանական երիտասարդութեան մէջ առարկաների ճիւղերի ուսումնասիրութեան վերաբերութեամբ մի փոփոխութիւն է նշմարվում։ Մի ժամանակ չափազանց շատ էր բնական գիտութիւնների ուսումնասիրութեանը իրանց նուիրող երիտասարդների թիւը, ի հարկէ մեծ մասամբ վարժապետներ դառնալու նպատակով, իսկ այժմ երևում է թէ վարժապետների աւելորդը կայ և համալսարան նոր մտնողները նախապատւում են կամ լեզուագիտութեամբ պարապելու, ժամանակով ուսուցչութիւն ստանալու նպատակով, կամ իրաւաբանութիւն են սովորում, որպէս զի կարողանան պետական ծառայութիւնը մտնել։

Անդրէաս Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«С. Петер. Вѣд.» լրագիրը հաղորդում է որ Գէրվիշ-փաշա աքսորեց Պրիզրէնից բոլոր յունադաւան քահանաներին։

—«Միջազգային հեռագրական» ընկերութիւնը հաղորդում է որ Մարսէլում ժողովուրդը հաւաքվելով ռուս հիւպատոսի տան առջև աղմկալի բողոք արաւ, որովհետև փարիզում արգելվեցաւ այն միտինգ, որով փարիզի արմատական կուսակցութիւնը պէտք է բողոքէր Գէսէ Գելֆման թագաւորասպան կնոջ մահվան դատապարտելու դէմ։

—«Polit. Corresp.» Վիէննայի լրագիրը ասում է որ հազիւ թէ կարող է աջողվել Ռուսաստանից առաջարկված կոնֆէրէնցիան բոլոր երկիրների յեղափոխականներին զսպելու համար։ Ռուսաստանը մոռանում է, ասում է գերմանական թերթը, որ բացի գուցէ Գերմանիայից, եւրօպական բոլոր միացած պետութիւնների գոյութիւնը յեղափոխութեան ծնունդ է. Անգլիա, Իտալիա, Ֆրանսիա, Սպանիա, Աւստրիա, Շվէյցարիա, մինչև անգամ Պորտուգալիա,—բոլորն էլ յեղափոխութեան զաւակներ են և հազիւ թէ նրանք կը գործեն այն սկզբունքի դէմ, որ նրանց պետական գոյութիւն է տուել։ Բայց գիժ անհատները, որոնք կարող են փորձ փորձել թագաւորներին կամ մասնաւոր անձերին սպանել, ամեն տեղ լինում են և ամեն տեղ նրանք խստութեամբ պատժվում են։ Նիհիլիստների հարցը, աւելացնում է թերթը, Ռուսաստանի համար պէտք է ներքին, ազգային հարց համարվի և ոչ թէ միջազգային, ուրեմն նա կարող է այդ տեսակների դէմ ներգործել իր սեփական և ոչ թէ միջազգային միջոցներով։

—Կ. Պօլսի մէջ հրատարակվող ֆրանսիական «Stamboul» լրագիրը ասում է. «Վանից ստացված թղթակցութիւնը և Թէրջիման-Էֆքեար լրագրում տպված, հաստատում է այն լուրը որ Թիւրք տեղական իշխանութիւնը բռնի կերպով խլում է զէնքեր հայերից և զինաւորում է քիւրդերին։ Քիւրդերը անվտանգ շրջում են քաղաքներում և գիւղերում, ոտքից մինչև գլուխը զինաւորված և թղթակիցը աւելացնում է որ անգլիական և ռուսաց կօնսուլները Վանի մէջ բողոքեցին արդէն այդ անարդարութեան դէմ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի։ „Правит. Вѣстн.“ լրագրում տպված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի շրջաբերականը ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին ուղղված, որ հրաւիրում է միացնել բոլոր ջանքերը համախոհ ծառայութեան համար ազգային կրթութեան գործին։ «Голосъ» հաղորդում է որ Զաբալկանսկի պրօսպէկտի վրա գտնված է մի գաղտնի տպարան, չորս պուդ դինամիտ, ճայթող գործիքներ և ռումբեր։ Այսօր կատարվեցաւ պրինց Օլդէնբուրգսկու մարմնի թաղման հանդէսը Սերգիևսկի անապատի մէջ, ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, բարձրագոյն անձերի և հերցոգ Օլդէնբուրգսկու։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մայիսի։ Այսօր 11 ժամին առաւօտեան Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ ուղևորվեց դէպի Թիֆլիս։

ՑԻՒՐԻԽ, 8 մայիսի։ Ցիւրիխի կանտոնում 30,000 ստորագրութիւններ են հաւաքված, որոնք բողոքում են սօցիալիստների կոնգրէսի կայանալու դէմ Ցիւրիխ քաղաքում։ Բայց չը նայելով այդ բողոքին, սօցիալիստները վճռել են այնու ամենայնիւ կայացնել կոնգրէս Ցիւրիխում, ունենալով իրանց մասնաժողով Ժընէվի մէջ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մայիսի։ Պաշտօնական հաղորդութիւն։ Ռուսաց կայսերական հաւատարմատար Պէկինի մէջ ստացաւ մինիստրից, մայիսի 3-ին, մի հաղորդութիւն, որով յայտնվում է որ չինական կայսրը վաւերացրեց մարկիզ Ցզէնգի ձեռքով ներկայացրած դաշնագիրը։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է որ Գատչինօի պալատում կը ներկայանայ հրէաների կողմից մի պատգամաւորութիւն Գինցբուրգի առաջնորդութեամբ։ Նորերումս կալանաւորվեցաւ մի կին, որի բնակարանի մէջ գտնվեցաւ տպարան, դինամիտ և ճայթող գործիքներ։ Նա մասնակից է յայտնվում Սաշկա Ենժինէրի, որ ական էր փորել Խերսոնի գանձարանի տակ և ստացել է գողացած փողերից 10,000 րուբլ։

ՄՈՍԿՎԱ, 8 մայիսի։ Բարձրագոյն թոյլտւութեամբ կը տօնվի Պիրոգովի յօբելեանը և այդ պատճառով համալսարանի խորհուրդը կազմել է մի մասնաժողով Տիխօնրավօվ րէկտօրի նախագահութեամբ, որին և պէտք է դիմեն այն անձինք և հիմնարկութիւններ, որոնք կը ցանկանան մասնակցել յօբելեանի տօնախմբութեան։

ՓԱՐԻԶ, 8 մայիսի։ Մատէրի մօտ ճակատամարտ եղաւ, որի մէջ Ֆրանսիացիները կորցրին վեց մարդ սպանված, իսկ կրումիրները մեծ կորուստներ կրեցին և սարսափեցան փախչել։ Ֆրանսիացիները մտան Մատէր։

ԼՈՆԴՈՆ, 8 մայիս։ Միրվից հեռագրում են, որ Միրվի բոլոր առաջնորդները ստորագրեցին մի խնդիրք Անգլիայի հետ պաշտպանողական և յարձակողական դաշն կապելու համար և ուղարկեցին այդ խնդիրքը բրիտանական դեսպանին Թէհրանի մէջ։

Կ. ՊՕԼԻՍ, 8 մայիսի։ Երէկվայ օրը յունթիւրքաց մասնաժողովի կայացած նիստին վճռվեցան այն միջոցները որոնք պիտի գործ դրվեն յոյներին զիջանելու նահանգները մաքրելու համար։ Զիջանող երկիրը բաժանված է վեց մասերի վրա։ Լարիսա, որ կազմում է առաջին մասը, պէտք է յանձնվի մի ամիս, կօնվէնցիայի վաւերացնելուց յետոյ. Տրիկալօ,—երկրորդ մասը, Կարդիցա,—երրորդը, Ելասէնօի մի մաս,—չորրորդը Արտա,—հինգերորդ մասը պէտք է յանձնված լինի երկու ամիս կօնվէնցիայից վաւերացնելուց յետոյ, Վոլօ,—վեցերորդ մասը պէտք է յանձնվի աւելի ուշ, բայց դեռ ժամանակը որոշված չէ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի։ Պետական բանկի $5^{0}/_{0}$ տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր., երրորդ 94 ր. $50^{1}/_{2}$ կ., չորրորդ 93 ր. 87 կ., ներքին $5^{0}/_{0}$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 50 կ., երկրորդ 217 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 87 կ., երկրորդ 93 ր., 12 կ., երրորդ 93 ր. 12 կ., ոսկի 8 ր. 9 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 24,28 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 208 մարկ., փարիզի վրա արժէ 256 Ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է. ծըծիչ մեքենաներ 1 ր., ԲԱԺԱԿՆԵՐ 12 կ., ՋՐԱՄԱՆՆԵՐ 50 կ., հրացաններ 20—100 ր., ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ 5 կ. մինչև 5 ր., ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5—50 ր., ժիլետներ 75 կ., վարտիկներ 4 ր., ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ր. տղամարդկերանց 14 ր., ԳԼԽԱՐԿՆԵՐ 1 րուբլ, մակինտօշներ 6 ր., հին պօրտվէյն և խերես 1 ր. 20 կ. շիշը, կօնեակ առաջին տեսակի 1 ր. 75 կ., ՊԻԿՈՒԼԻ 50 կ., Թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅ 1 ր. 40 կ. առանց թղթի։ Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ԱԼԲՕՄՆԵՐ շատ էժան։ 11—15

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ"** անուանով վիպասանութիւնը։ Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը։ ԲԱԳՈՒ՝ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՎՐԻԶ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է „Կենտրոնական" և պ. Զ. Գրիգորեանցի „Կովկասեան" գրավաճառանոցներում „Մտաւոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին" հեղ. Ջօն Ստիւարտ Բլէկկի. Թարգմ. Գրիգոր Շահբուդաղեանի. գինն է 60 կոպէկ։ Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի թարգմանչին դիմել այս հասցէով. Въ Тифлисъ, Учителю Армянской Духовной Семинарій Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

* * *

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետևեալ աշխատութիւնը. „Մայրական Դաստիարակութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած". հեղ. Ֆ. Բոմբուսոնի։

Չը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն. **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՌԻ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական րէվօլվէրներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, Ջոնսոնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տուրնօրի **ԳՐԻԶՆԵՐԸ** և էկստրակտ կակաօ-շօկօլադի ծախելու համար, որոնք Փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կօնֆեկտներ հայի դէմ 60 կ. ֆունտը։

71—100

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը աճեցնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը աճեցնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

67—100

„Խ Ե Ն Թ Ը"

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՖՖԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի" խմբագրատանը, „Կենտրոնական գրավաճառանոցում", „Կովկասեան գրավաճառանոցում" պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովսեփեանցի ծխախոտի մագազիններում։

Գինն է **1** րուբլ **20** կոպ.։

ՄԻՆՉԵՒ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐՔԵՐԸ։

1) Երկու մանրավէպ. Ալֆօնս Դօդէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.

2). Պօղոսնու ուսուցչի օրագրից, Թարգմ. Տ. Նազարեան։ . . . . 20 կ.

3). Պարապ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ։ Ն. Տ. Աւետիքեան։ 25 կ.

4. Ճանապարհորդութիւն Ղարաբաղում, Արցախեցի . . . . 30 կ.

5. Ծաղիկ և ծաղկահատութիւն, Թարգմ. Տ. Նազարեանցի . . . . . 15 կ.

6). Քնար խօսնակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան . . . 50 կ.

Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէկ։ Առանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բացի „Քնար խօսնակից" որի համար առանձին կարելի է ստորագրել և միացեալ հինգը առանձին։

Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան։

ԱՐԾՐՈՒՆՈՒ գալլերէում յուլիս ամսից վարձով տրվում է ԹԱՏՐՕՆԻ մօտ եղած բուֆէտը և րէստօրանը։ Ցանկացողները թող դիմեն Արծրունու գալլերէայի կանտորա։

4—10

Տպագրութեան համար պատրաստվում է մեր ժողովածուի ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ։ Այս հրատարակութիւնը բաղկացած կը լինի շատ հատորներից, որոնք հետզհետէ 'ի լոյս կընծայվին. Նոքա պէտք է բովանդակեն իրանց մէջ հայ ժողովրդեան բերանացի աւանդութիւնները.—ՀԷՔԻԱԹՆԵՐ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ ԵՒ ՈՃԵՐ. ԱՌԱԾՆԵՐ. ԱՌԱԿՆԵՐ. ԱՆԷԾՔՆԵՐ. ՕՐՀՆԱՆՔՆԵՐ. ԵՐԴՈՒՄՆԵՐ. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ. ՇՈՒՏ-ԱՍԵԼՈՒԿՆԵՐ. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ և ՊԱՐ-ԵՐԳԵՐ։

Որի համար լի յուսով դիմում ենք մեր ազգայնոց, ընդհանուր ուժով օգնելու մեզ, ուղարկելով պատշաճաւոր նիւթեր, բուն տեղական բարբառով։ Այդպիսիներին պատիւ կունենանք յիշել, որպէս հրատարակութեան աշխատակիցներ, ուղարկելով նոցա մի մի օրինակ բոլոր հատորներից։

Մեր հասցէն՝

Тифлисъ. Въ частную лечебницу, доктору Багарату Навасартянцъ.

144 Արծրունու գալլէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրավաճառանոցում հետևեալ գրքերը։

1. **Հայը և Հայաստանը օտարների աչքում**, հրապարակական դասախօսութիւն ընթերցուած Թիֆլիսի ժողովարանում մայիսի 17-ին 1879 թ. Արգար Յովհաննիսեանի. Թ. 1881 թ. գ. 30 կոպ.

2. **Մտաւոր ֆիզիքական և բարոյական ինքնակրթութեան մասին**, խորհուրդներ այն երիտասարդներին, որոնք կեանքի ասպարէզը մտնում և ցանկանում են կանոնաւորապէս պատրաստուել ուսումնական և հասարակական գործունէութեան համար. հեղ. Ջօն Ստիւարտ Բլէկկիի, թարգ. Գր. Շահբուդաղեանց Տ. 1881 թ. գ. 60 կ.

3. **Հենչէլի.** Բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ ծխական դպրոցների համար փոխադրեց Ս. Մանդինեանց 1-ն և 2-դ տարի, Թ. 1881 թ. գ. 40 կ.

4. **Քնար** ժողովրդական երգեր հեղ. Խաչ. Տէր-Խաչատրեանց, Երևան 1880 թ. գ. 45 կ.

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ գրքերը։

5. Մարկոս Աւրելիոս կայսեր իմաստասիրական և խրատական թղթերը, Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

6. **Բիչչիօլա.** Պատմական վիպասանութիւն Քս. Վ. Սէնդին Գաղղիացւոյ Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

7. **Մագդաղինէ** վիպասանութիւն Պ. Յուլիոսի Սանտոյ. անդամ Գաղղիոյ ճեմարանին, Վենետիկ գ. 1 ր.

8. Սող. Գեսների քերթուած ի մահն Աբէլի Թարգ. Հ. Մանուէլի Վ. Ջախջախեան Վենետիկ գ. 1 ր. 75 կ.

9. Ֆենելոնի Արկածք Տելեմաքայ, Թարգ. Եդուարդայ Վ. Հիւրմիւզեան Արքեպ. Տիրակայ Վենետիկ գ. 3 ր. 50 կ.

10. Առակք Եզովբոսի, Թարգ. ի գաղղիական լեզուէ Հ. Մինաս Վ. Բժշկեան Վենետիկ գ. 2 ր. 50 կ.

11. Յուլիոս Կեսարու յիշատակարանք գաղղիական պատերազմին, Թարգ. Հ. Արսենի Կ. Բագրատունեաց Վենետիկ գ. 1 ր. 75 կ.

12. Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց հայոց համար Հ. Մանուէլ Վ. Քաջունի Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

Օտարաքաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր րուբլուն 10 կ. առանց փողի պատուէրները չեն կատարվում։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր. 5 կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	ֆ. 1 ր. 30 կ.
— — —	1 ր. 10 կ.	— — — —	ֆ. 1 ր. 40 կ.
— — —	1 ր. 20 կ.	— — — —	ֆ. 1 ր. 60 կ.
— — —	1 ր. 40 կ.	— — — —	ֆ. 1 ր. 80 կ.
— — —	1 ր. 60 կ.	— — — —	ֆ. 2 ր. —
— — —	1 ր. 80 կ.	— — — —	ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը — —	2 ր. —	— — — —	ֆ. 3 ր.

82—100

Թիֆլիզում կազմվում է «Մարմնամարզական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժվելու մարմնամարզութեան սրախաղութեան (фехтованье) և հրացան արձակելու մէջ, քաղաքից դուրս զբօսանքներ և ուրիշ թոյլ տուած զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը։

Ընկերութեան կանոնադրութիւնը տէրութիւնից արդէն հաստատված է և տպված է № 90 «Кавказъ» լրագրի մէջ, ապրիլի 25-ին։

«Մարմնամարզական ընկերութեան» անդամ գրվել և տարեկան 10 րուբլի վճարել կարելի է.

1) փոխարքայի գլխաւոր կառավարութեան դեպարտամենտում, Կարլ Կարլօվիչ Կեստերի մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցերեկվայ.

2) Վիկտոր Ալէքսանդրօվիչ Դինգելշտեդտի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, Թամամշեվի տանը, Սօլդատսկի բազարի վրա.

3) «Кавказъ» լրագրի խմբագրութեան մէջ.

4) Ալէքսանդր Ալէքսանդրովիչ Բրունի մօտ, Միխայլովսկայա փողոցի վրա, ուսումնական մագազինում։

ՌՕՍՏՕՎ-ԴՕՆԻ-ՎՐԱ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ ՅԱԿ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՕՎ յայտնում է հետևեալը. իմ ծխախոտի արդիւնաբերութեան մեծ պահանջը գրգռեց Թիֆլիսի գործարանատէր Պիրալով և ընկ. գալգովին նմանվել իմ արդիւնաբերութեան ձևերին զանազան անուններով, մանաւանդ „ԼՕՌԻՍ-ՄԵԼԻՔՕՎ", „գեներալ ԳԷՅՄԱՆ" և „գեներալ ՍԿՕԲՕԼԵՎ"։ Նախազգուշացնելով իմ ծխախոտը գործածողներին խնդրում եմ ուշադրութիւն դարձնել իմ ֆիրմայի հետևեալ նշանների վրա. 1) Հրապարակական հաւանութիւն 1865 թուականի Մօսկվայի հանդէսից, 2) Ոսկեայ մեդալ Մօսկվայի տեխնիկական հանդէսից 1872 թ., 3) Պատուաւոր կարծիք 1873 թ. Վիէննայի աշխարհահանդէսից, 4) մեծ մեդալ 1876 թ. Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհահանդէսից, 5) Արծաթէ մեծ մեդալ 1878 թ. Փարիզի աշխարհահանդիսից, իսկ այդ նշանները չունեցող արդիւնաբերութիւնը ԽՆԴՐԵՄ ԿԵՂԾ ՀԱՄԱՐԵԼ։ ՄԱԿԵԴՕՆԻԱՅԻՑ նորերումս ստացայ ամենալաւ ՀՈՏԱՒԷՏ ԾԽԱԽՈՏ։ Լաւ յատկութեան ծխախոտ սիրողներին խնդրեմ դիմել Թիֆլիսի մէջ. Սպիրիդօն Իվանօվիչ Պօպօվին, Ռամազօվին, Բայանդուրօվին, Միկիրտումօվին, Բէժանօվին, Տէր-Գրիգորեանց և ընկ. դեպօն, որ գտնվում է Գօլօվինսկի փողոցի վրա, իշխան Բագրատիօն-Մուխրանսկու տանը։ ԱՅԴ ԱՆՁԻՆՔ ՈՒՂՂԱԿԻ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ԾԽԱԽՈՏԸ։

Ռօստօվի 1-ին գիլդիայի վաճառական և ծխախոտի գործարանատէր ՅԱԿՕՎ ՍՄԲԱՏՕՎԻՉ ԿՈՒՇՆԱՐԵՕՎ։

1—12

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Мая 1881 года. Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.